

10(715)

2025

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ●

Հանաչել զիմաստություն եւ զխրաք, իմանալ զբանս հանճարոյ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԼՈՒՄԱՐԱՐ

ՈՒՍՏԱԳԵԱՅՈՒԹՅՈՒՆ. ԶՈՐԱՆԱՔ ԵՎ ԶՈՐԱՅՆԵՔ

Ուխտագնացության միջոցով քրիստոնյան հաղորդվում է անցյալի սրբազան ժառանգության հետ և դրանով իսկ կապ հաստատում ապագայի հետ, քանզի առանց անցյալի հետ կենդանի կապի անիմաստ է ապագայի հետ շփում ստեղծելու փորձը:


Երևանի Արաբկիր համայնքի Սուրբ Խաչ եկեղեցու իռզևոյ իռզիվ տեր Պարթև քահանա Սուրադյանի զխաժորոթյամբ պարբերաբար կազմակերպվող ուխտագնացությունները անմատչելի վայրերում տեղակայված դարակերտ սրբավայրեր, որտեղ հազվադեպ է հնչում աղոթք և որտեղ հասնելու համար անհրաժեշտ է լինում հաղթահարել անանցանելի ճանապարհների խոչերը, ուխտագնացության մասնակիցները միասին իրենց աղոթքներն են շաղախում այդ եկեղեցու պատերի ներսում դարերով ամփոփված աղոթքին՝ դրանով իսկ ոչ միայն իրենք զորություն ստանալով, այլև զորացնելով սուրբ տաճարը:

Դարերի փորձը ցույց է տվել՝ ինչ փորձության մեջ էլ որ հայտնվենք, մեր հավատքն է

մեզ փրկել: Մեր հավատքը, որը մեզ միասնական, ամուր է դարձրել և ցանկացած փորձություն հնարավոր է եղել հաղթահարել: Մենք էլ կարողանանք զորանանք մեր հավատքով, մեր հայրերի թողած ժառանգությունով, արժեքներով, որովհետև հավատքը միայն կրոնը չէ, և կրոնը միայն հավատք չէ: Դա մեծագույն արժեք է, որ միշտ պահել-պահպանել է մեր տեսակը՝ մեր ինքնությունը: Մենք էլ պարտավոր ենք պահել և փոխանցել մեր սերունդներին:

«Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ հրեշտակները և ոչ մարդիկ, ոչ սուրը և ոչ հուրը, ոչ ջուրը և ոչ էլ որևէ այլ դառը հարված»: 5-րդ դարում պատմիչ Եղիշեն այսպես է բնութագրում հայերին, որոնք հանում հավատքի մարդկության պատմության մեջ թերևս առաջին պատերազմը մղեցին:

Նրանք, ովքեր այսօր հարվածներ են հասցնում եկեղեցուն, հասկանում են՝ եթե կարողանան տկարացնել Հայոց եկեղեցին, կկարողանան հաղթանակներ տանել այլ ոլորտներում:



«ԵՍ ԷՆ ԱՅՍ ԶԵՎՈՎ ԵՄ ՈՒԶՈՒՄ ԲԱՐՁՐ ԴԱՅԵԼ ԱՐՅԱՆԻ ԱՆՈՒՆ ՈՒ ԴԱՏԻՎԸ»



«Լուսարար»-ը հարցազրույց է ունեցել Արցախի կրթական ոլորտում ծանաչված մասնագետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Պետրոսյանի հետ: Աշխատելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես տեսուչ, նախարարության տեսչական խմբի կազմում նա տարիներ շարունակ եղել է Արցախում գործող ավելի քան 200 դպրոցներում, տեղերում մասնագիտական ու մեթոդական օգնություն ցուցաբերել դասվարներին: «Լուսարար» թերթում հաճախակի հանդես էր գալիս մասնագիտական նորությունների վերաբերյալ հոդվածներով: Գործնական դասեր էր վարում դպրոցներում: Դասավանդելով նաև Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում՝ ղեկավարում էր ապագա մանկավարժների փորձուսուցումը: Սովորելով սովորեցնելը նրա զխաժոր սկզբունքն է:

Բռնատեղահանությունից հետո ի՞նչ ճանապարհ է անցել հնուտ մանկավարժը, ինչպե՞ս է դիմագրավում մարտահավերժների՝ փորձեցի՞ր ներկայացնել ստորև:

- Տիկին Պետրոսյան, չէի ցանկանա անդրադառնալ 2023թ. սեպտեմբերի 19-ի պատերազմին, դրա հետևանքով Արցախի հայաթափմանը, բռնազաղթին, նորից վերադարձվել այդ ամենը: Ինչպես ժողովուրդն է ասում՝ սուգը սուգ է բերում: Պատմե՛ք՝ ինչպե՞ս եք նորից սկսել ձեր կյանքը գրոյից:

- Որքան էլ ուզենանք մեզանից վանել անցյալի հիշողությունները, միևնույն է, ականալից ուղեղումդ տրոփում է՝ ովքե՞ր ենք մենք՝ արցախցիներս, հիմա...

Մեծ դժվարությունների, չարչարանքների միջով անցած, արդեն ինքնահաստատված, ինքնահարսկորում ունեցող արցախցիներս, բռնելով գաղթի ճանապարհը, մտածելով տեղի ունեցած արհավիրքի մասին՝ վրդովվում, լցվում էինք ցասումով, կոկորդնեթիս կանգնած թուրք կուլ չէր գնում. գիտակցում էինք տեսականը՝ ի՞նչ է սպասվում մեզ..., մինչև հոգու խորքը վիրավորված, անօթևան, անզոր...

Իմ պարագայում մտածում էի՝

կոնֆետ կփաթեթավորեմ կամ երչիկ, կամ էլ փողոց կմաքեմ. պատրաստ էի ցանկացած գործ անելու, միայն թե կարողանանք գոյատևել: Ինձ հույս էր տալիս այն միտքը, որ թունելի վերջում միշտ լույսն է:

Քանի որ շատ են սիրում մանկավարժի իմ մասնագիտությունը, սկզբում ուզում էի դասավարդել աշխատանք գտնել որևէ դպրոցում: Մտնելով ցանկացած դպրոց՝ նախ տեղեկանում էի, թե Արցախից դիմումատու կա, թե ոչ: Երևանի՝ իմ մտած բոլոր դպրոցներում բավականին դիմումատու դասվարներ կային: Ես չէի կարող նրանց անգործ թողնել, հեռանում էի այդ դպրոցներից, ինչքան էլ տնօրենները պնդում էին, որ աշխատելու նախապատվությունը ինձ կտան:

Աշխատանքի արահետն ինձ տարավ Արարատի մարզի Դուկասավանի միջնակարգ դպրոց, որտեղ ընդունվեցի որպես դասվար: Աշխատավարձը գայթակիչ չէր. 88000 դրամ, սակայն դա առավել էր տանը պարապ նստելուց:

- Ինչպե՞ս ընդունեցին Ձեզ, Ձեր

առաջին հանդիպումը աշակերտների հետ, առաջին դասը: Ի վերջո, ինչքան էլ փորձառու լինեիք, նոր միջավայրը հոգեբանական լարում էր պահանջում:

- Շատ սիրով ու ջերմությամբ ինձ ընդունեցին այս դպրոցում թե՛ մանկավարժական կոլեկտիվը, թե՛ աշակերտները: Չմայած սկսնակ չեմ, բայց կարևոր էր և աշխատում էի որ եկվորի (չեմ ուզում ասել՝ գաղթականի) ճնշվածությունն իրեն զգացնել չտար: Բայց հենց առաջին դասս՝ Պ. Սևակի «Քիչ ենք, բայց հայ ենք», տապալվեց... իմ հեղեղած արցունքների պատճառով:

Առաջին գործս, որ արեցի, իմ «Արցախի անկյուն» էր, որը համարվում է առ այսօր: Այն Հայրենի հողի վրա կանգնած լինելու զգացում է ստեղծում:

Ինձ ոգևորում էր, որ աշակերտներս կարճ ժամանակում սկսեցին փայլել իրենց մաթեմատիկական հմտություններով, քննադատական և ստեղծագործական մտածողությամբ: Մեկը մյուսի հետևից նախագծային աշխատանքները, թանգարաններում լավագույն ներկայացումները կայծեր էին, որ երբեմն բռնկվում էին իմ հոգում: Յուրաքանչյուր դասի՝ անկախ առարկայից, բառերս, հուշերս, երևակայությունս, մտածողությունս տանում են Արցախ, ամեն երևույթ կապում են Արցախի հետ:

Ամենկին հեշտ չէ մասնակցել Վերջին զանգի, Առաջին զանգի, Այբուբենի տոնի և այլ արարողություններին, առավել ևս՝ կազմակերպել: Արցունքներս կոկորդումս խեղդելով, երբեմն՝ հեղելով, պատասխանատվությունս հաշվի առնելով՝ տիրապետում եմ ինձ...

- Բայց հավանաբար դա նաև մղում է վերագտնել Ձեզ:

- Աշակերտներս գիտեն, պատկերացնում են՝ որտեղ են իմ հայրենի գյուղը, Ստեփանակերտը, Մարտակերտը, Ասկերանը, Մարտունին ու Հաղորւթը, Շուշին ու Քարին

տակը (որպեսզի չասեն՝ արցախցիները Քարին տակից վառվող անվաններ էին զլորում դեպի Շուշի), Քաջաթաղն ու Շահումյանը: Գիտեն արցախյան ավանդույթների, մշակույթի, եկեղեցիների, մեր հոգևոր հարստությունների մասին: Ազգությամբ եզդի Թամոն ասում է՝ դե, դրա համար էլ վերցրել են Արցախը:

Ամեն երկուշաբթի բոլորը երգում են Հայաստանի Հանրապետության օրհներգը, ես երգում եմ Արցախի օրհներգը: Ամեն դասի ավարտին աշակերտներս ուխտ են անում դառնալ գյուտարարներ, ստեղծել գերհզոր զենքեր... Սպասում են...

Այո, ճիշտ նկատեցիք, հավանաբար դրանից են ոգևորվում և հետաքրքիր դասեր կազմակերպում: Հիմա աշխատում են Դարակերտի միջնակարգ դպրոցում: Այո, որ հայեցի դաստիարակություն են տալիս իմ աշակերտներին, հանգստացնող և մոտիվացնող է:

- Լավատեղյակ լինելով Արցախում Ձեր եռանդուն, պրպտող, նորարարական գործունեությանը՝ չեմ կասկածում, որ այստեղ նույնպես այդ հատկանիշներով աչքի չընկնեիք:

- Հավանաբար այդպես է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նկատեց իմ պատասխանատվությունն ու նվիրումով աշխատանքը և ընդունեց ինձ՝ որպես ԿԳՄՍՆ փորձագետ: Առաջարկեցին գրել թեմատիկ մոդուլներ՝ երթևեկան ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման համար: Մոդուլները հաստատվեցին ԿԳՄՍՆ կողմից, և ես հիմա վերապատրաստող մանկավարժ եմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոցում:

Առաջարկեցին մասնակցել «Հողված 3 ակումբ» կազմակերպության կողմից նախաձեռնված մեդիագրագիտության դրամաշնորհային ծրագրի մրցույթին: Շահել

են մրցանակ, ինչի արդյունքում Դուկասավանի միջնակարգ դպրոցում կազմակերպության կողմից ստեղծվել և ժամանակակից սարքավորումներով կահավորվել է մեդիագրագիտության կաթինեն:

Մասնակցել են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, վաստակել բարձր ցուցանիշ, ինչի արդյունքում բավականին բարձրացավ աշխատավարձս: Ճիշտ է, Արցախից բռնատեղահանված ուսուցիչները չունեն պարտադիր ատեստավորման վերապատրաստում, ինչն ապահովում է 11 միավոր տարակարգ ստանալու և աշխատավարձը էլ ավելի բարձրացնելու հնարավորություն: Այդ պատճառով ինձ 3 միավոր պակասեց 4-րդ աստիճանի տարակարգ ստանալու համար: Հիմա ունեմ ուսուցիչ 3-րդ աստիճանի տարակարգ: Որպես ուսումնաօժանդակ՝ ձեռնարկներ՝ նախարարության երաշխավորությամբ շուտով կիրառարակվեն 3-րդ և 4-րդ դասարանների Մայրենիի համար նախատեսված իմ հեղինակությամբ գիրք-տետրերը:

Աշխատում եմ նաև Վարդենիսի մանկավարժական համալսարանում:

Ես էլ այս ձևով եմ ուզում միշտ բարձր պահել ԱՐՅԱՆԻ անունն ու պատիվը:

- Ի՞նչ կմաղթեիք ուսուցիչներին:

- Ուսուցիչ գործունեությունը պատասխանատու և չարչարանքներով լի աշխատանք է: Տեղահանված՝ տնից-տեղից գրկված ուսուցչի աշխատանքը՝ առավել ևս, որովհետև զգացմունքները գերակայում են գիտակցությանը:

Շնորհավորում եմ բոլոր ուսուցիչներին՝ իրենց պայքարող տեսակի համար, իրենց ուժն ու եռանդը չխնայելու, իրենց աննկուն կամքի համար:

Խոնարհումս ու խնկարկումս բոլոր մարտիրոսավորներին...

Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ «ԽՈԶԻՎԱՆՔ» ԳՐԷԻ ՀԵՌՈՐԶԱՆԴԵՍԸ

Մենք այնքան ենք տրվել, այն-
քան ենք հարազատացել կեղծի-
քի հետ, որ երբ ինչ-որ տեղ մի
ճշմարիտ խոսք է հնչում, ուղղակի
ցցումենք է առաջացնում:
Սա այսօր է միայն, դարեր
շարունակ ենք մենք հարազատա-
ցել կեղծիքի հետ:
Մենք կեղծիքի մեջ ենք ապ-
րում: Մեր շրջապատում այսօր
մենք ինչն որ գնահատում ենք,
ամպայմանս պետք է օտար լի-
նի, որ մեզ հարազատ լինի...

Հեռավոր 2012-ին տված իր հարցազրույցներից մեկի ժամանակ էր այս միտքն արտահայտել Յայկական ճարտարապետությունն ունենալիս իրող հիմնադրամի նախագահ Սամվել Կարապետյանը։ Արդարության ու ճշմարտության ջատագով այս քաղաքացին ապրել է միմիայն ազգային շահը վեր դասելով ամեն ինչից։ Ժամանակի իրականությունը լավագույնս չի գնահատել երախտավոր ու զմիտվող այս մարդու գործունեությունը։

Հովհաննես Թումանյանի թանգարանում տնօրեն Լուսինե Ղափաճանյանի նախաձեռնությամբ կայացած Սամվել Կարապետյանի «խոշիվանք» գրքի շնորհանդեսին ներկա էին նաև հեղինակի այրին՝ Էմմա Աբրահամյանը, որը նաև գրքի գիտական խմբագիրն է, ծրարատագետ, վիմագրագետ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրամի համատնօրեն Բաֆֆի Քորթոշյանը:

Աշխատությունը ներկայացնում է Վրաստանի Հանրապետության մայրաքաղաք Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնված և այժմ ամբողջությամբ ոչնչացված համրհիշակա հսկողմանքի գերեզմանոցի պատմությունը:

Նախահրատարակչական աշխատանքները կատարվել են «Գալուստ Կիլիկյեկեան» հիմնարկության և ՀՈՒՒՍՆ-ի աջակցությամբ:

«Խոջիվանք»-ը տպագրվել է դեռևս 2019 թվականին, բայց ոչ հայերեն տարբերակով, այլ անգլերեն, որն այնքան էլ հեղինակի սրտով չէր (հովանավոր չկար՝ հայերեն տպագրելու համար):

Բարեբախտաբար, այսօր ունենք հայերեն տարբերակը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, սակայն, ցավոք, մեզ հետ չէ հեղինակը:

Թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը հանգամանալից անդրադարձավ հայոց երեւելիներին, որոնք ամփոփված են եղել հաջիվանքի գերեզմանատանը և մանրամասնեց Ամենայն հայոց բանաստեղծի հուղարկավորության դեպքը, որը տեղ է մոտ մեկ ամիս, քանի որ նրա աճյունը Մոսկվայից պիտի տեղափոխվեր հաջիվանք: Այդ տեղափոխության ընթացքում ռուսական տարբեր քաղաքներում ժողովուրդը հավաքվում էր ու վերջին հրաժեշտն էր տալիս սիրած բանաստեղծին: Սարտի 23-ին մահացած Թուամանյանի աճյունը նեհկլալուպովի և Նվարդ Թումանյանի օգնությամբ միայն ապրիլի 15-ին է ամփոփ-

վում հաջիվանքում, որը համաժողովրդական ծեսի է վերածվում: Ժամանակին վրաց գրողներից մեկը նկատում է. «Երբեք չէինք տեսնում, որ ժողովուրդը այսքան մեծ հոգածությամբ ու սիրով հրաժեշտ տար իր զավակին»:

ՀՈՒՄ հիմնադրամի համատնօրեն Րաֆֆի Քորթոշյանը իր շնորհակալական խոսքում ընդգծեց հետևյալ միտքը. «Իրականում ինձ համար այս գիրքը, իր բովանդակությամբ և հայագիտության հա-

մար բերած նորություններից բացի, հայերեն տարբերակով շատ կարևոր է նրանով, որ մենք վերջապես իրականացրինք իմ ուսուցչի՝ Սամվել Կարապետյանի ցանկություններից ես մեկը, քանի որ 2019-ին տպագրված ամգլերեն տարբերակով գիրքը նրա սկզբունքներին դեմ էր, և ասում էր. «Նախ մենք պետք է իմանանք, հետո՝ օտարները, որովհետև մեր գրքերը միշտ հրատարակվել են նախ հայերեն, հետո՝ օտար լեզուներով»:

Երախտագիտությունն են հայտնում բոլոր այն կառույցներին, որոնց աջակցությամբ իրականացել է Սամվել Կարապետյանի իղծը: Հայերեն տարբերակում ավելին են նյութերը, քան անգլերեն տարբերակում: Շնորհակալությունն նաև տիֆին Ղարախանյանին՝ այս շնորհանդեսը իրականացնելու համար»:

«խոջիվանք»՝ աշխատության գիտական խմբագիր՝ Սամվել Կարապետյանի այրին, ողջունելով միջոցառման ներկաներին, շեշտեց, որ այսօր հավաքվելու առիթը «խոջիվանք» գրքի ծնունդն է, հավերժ փառք հեղինակի անմահ հիշատակին: Իր խոնարհումը բերելով երջանկահիշատակ տիղի-սագետ Սարգիս Դարչինյանի հիշատակին՝ նա ասաց, որ հենց նրա տրամադրած լուսանկարներով ու տեղեկություններով Սամվելը կարողացավ առավել հարստացնել գիրքը: «խոջիվանք» գրքի ստեղծման գաղափարը Սամվելն ուներ դեռևս 1990-ական թվականների կեսերին, այն ժամանակ, երբ ոչնչացված գերեզմանոցի տարածքում պետք է կառուցվի վրացական առաջնորդահիստ եկեղեցին: Նա իր առջև նպատակ էր դրել նախ համառոտ ներկայացնել խոջիվանքի պատմությունը, ապա ցույց տալ՝ զեղարվեստի և ճարտարապետության տեսանկյունից նյութական մշակույթի ի՞նչ հուշարձաններ կային գերեզմանոցում, մոտավոր հաշվարկներով որքա՞ն հանգուցյալ էր ամփոփ-

ված, և կազմել ամփոփվածների ցուցակը: Բնականաբար, զրքուն ներկայացված ցանկը ամբողջական չի կարելի համարել, քանի որ նման աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ էր տեղում կատարել հաշվառման և ուսումնասիրական աշխատանքներ, որը հաջողվածքի գերեզմանոցի պարագայում հասկանալի պատճառներով հնարավոր չէր:

Այսպես, 1650-ական թվականների սկզբին դրամահատարանի արքունի տան պատանխանատու խոջա Բեհբուղլը վրաց Ռոստոմ թագավորից իրավունք է ստանում Հավաբար թաղամասի հարևանությամբ Մախաթ սարի ստորոտին գտնվող իրենց տոհմական գերեզմանոցում եկեղեցի կառուցելու, որն էլ կառուցվում է 1655 թվականին: Այդ է փաստում ոչնչացումից գերծմնացած շինարարական արձանագրությունը. «Ի ԹԿԻՍ ՀԱՅՈՒՆ ՌԵՂ (1655), ԿԱՍՏՈՒՆ ԱՍՏՈՒՅՈՐ ԵՄ՝ ԽՈՂԱ ԲԵՀԴՈՒՏԵՍ ԵՍ ԵՂԲԱՅԻՆ ԻՍ՝ ԽԱՏԻՆ ԵՒ ԿՈՂԱԿԻՑ ԻՍ ԼԱԼԻՆ

ՇԻՆԵՍՑԻՆԸ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՂՕԹԻՔ ԱՍԼԱՆԻՆ»։ Եկեղեցին ստանում է Ծիրանավոր ՍԲ. Աստվածածին անունը։ Սակայն թիֆլիսահայությունը կոչում է խոջիվանք՝ խոջայի կողմից կառուցված լինելու պատճառով, որն առ պայսր էլ հայտնի է ժողովրդի կողմից տրված անվանաձևով։

1780 թվականին Բեիբուդյան տոհմի մեկ այլ ներկայացուցիչ՝ Թիֆլիսի քաղաքագլուխ մեկիք Ավետիքը, հոգևոր իշխանություններից թույլտվություն ստանալով, նորոգության կարոտ եկեղեցին վերաշինում է և երկու տարի անց ավարտում: Եկեղեցին ունեցել է նաև որմնանկարներ, որոնք, ըստ նկարիչ Գրիգոր Շաբաբչյանի, պատկանել են Նաղաշ Հովնաթանի վրձին: Բացի Բեիբուդյան տոհմի հանգուցյալների և հոգևորականների շիրմաքարերից, հետագայում կատարվում են այլ թաղումներ ևս, որոնց թիվն ավելանում է հատկապես 1810-ական թվականներից հետո, երբ ցարական կառավարության հրամանով Թիֆլիսի մի քանի գերեզմանոցներ ոչնչացվում են, և խոջիվանքը վերածվում է կենտրոնական հանգստարանի:

Մինչև 1934 թվականը գերեզմանոցը բարեկարգվել է և նորոգվել: Նշյալ՝ 1934-ից սկսած՝ քաղաքային իշխանությունները արգելում են թաղումները և որոշում գերեզմանոցը դարձնել փակ: Երևույս տարի անց նոր որոշում է ընդունվում՝ տարածքը վերածել զբոսայգու: Սակայն հետագայում թույլ են տալիս որոշ թաղումներ: Օրինակ՝ 1937 թվականի նոյեմբերի 16-ին մեծ դժվարում է թյամբ հաջողվում է իրականացնել բանաստեղծ Յ. Հակոբյանի ցանկությունը՝ ամփոփվել գերեզմանոցում:

1936-ից սկսվում է գերեզմանոցի ավերումը: Առաջին հերթին պայթեցվում է վանական համալիրը: 1715թ. ոմն Սանդուխտի հիշատակին կերտված խաչքարը երկատված վիճակում հայտնաբերվում է 1970-ական թվականներին հողային աշխատանքների ժամանակ: Բեհուդյանների տապանաք ա ռ ե թ ի ց փրկվել է միայն 1832թ. վախճանված Դարչիի՝ երկու կես եղած շիրմաքարը: Գրիգոր Շարբաբեյանի ջանքերով հաջողվում է ոչնչացումից գերծ պահել մի քանի տապանաքեր, այդ թվում՝ Գ.

Սուղորուկյանի աճյունն ու չիրմա-
քարը. «Դիակը տեղափոխելիս
այն վնասվեց», գրում է Կմա Յա-
կոբյանը. իսկ իր այնքան սիրած
ճուղավոր կոշիկը դուրս ընկավ:
Սրբապիղծ ռժագործները լկտի-
աբար հափտակվեցին մեծ գրողի
սիրած ոսկե մատանին»:

Մնացած տապանաքարերը ծառայում են որպես շինանյութ, եկառուցապատվում են պուրակների աստիճաններն ու եզրաքարերը, փողոցների մայրերի եզրաքարերը, ինստիտուտի որմերը, դպրոցի բակի շրջապարիսպը և այլն: Լավորենսի Բերիայի տներին մենք կառուցելիս (բժիշկ Ա. Բեգիջյանյանի վկայությունն է) հենց իրենց տոհմի ներկայացուցիչների մարմարակերտ տապանաքարերով է երեսպատվել տան զուգարանը... «Փառաշուք շիրինաքաղաքը նման էր խորշակածնե արտի... Ամեն ինչ հողին էր հավասարեցված»,- գրում է 1938-ին Թիֆլիս այցելած Գերուսյանը:

Հրաշքով փրկվում է միայն մեծն Ռաֆֆուն հուշակոթողը: Հենց այս մահաբաժանի շուրջն էլ հետագայում գոյանում է հայ մշակույթի գործիչների փոքրիկ պանթեոնը, որը ևս գեոծ չի մնում վանդալիզմի:

մից (1994թ.): 2000թ. նոյեմբերին
պանթեոնը նորից է ենթարկվում
ռտմծգութլունների:

Ոչնչացված գերեզմանոցի տարածքում (1995թ.) Իյա Բ Կաթողիկոսը նախագահ Շևարդնաձեի հետ կատարում է առաջնորդանիստ եկեղեցու հիմնորինները: Բողոքի ալիքը ժամանակավորա-

պէս կանցնում է այն, բայց 1996-ին տարածքը պատվում է հողով կոծկած տապանաքարերով ու հանգուցյալների ոսկորներով: Անհարգալից վերաբերմունք է դրսևորվում ոսկորների նկատմամբ. դրանք չեն վերաթաղվում, այլ շինադրի հետ խառնվելով՝ առաջացնում են աշյունախառն հողաբուլունքներ...

Այս գերեզմանոցում են եղել ամփոփված ազգային-ազատագրական գործիչներ (Քեռի, Նիկոլ Դուման, Սեբաստացի Մուրադ, Խմբապետ Ավո...), զորոցներ (Գ.Ախվերդյան, Ծերենց, Պ.Պռոշյան, Ալ.Ծատուրյան, Մուրացան, Նար-Դոս...), նկարիչներ, դերասաններ, երաժիշտներ, մշակույթի այլ գործիչներ:

Վկայություններ կան նաև հայ մանուկների բարեկամ Ղ. Աղայանի և հայոց մեծության՝ Հովհաննես Թումանյանի շիրմաքարերի նկատմամբ ցուցաբերված անհարգալից վերաբերմունքի մասին: Թումանյանի շիրմաքարը փրկվել է իր զավակների շնորհիվ: Այսպիսով, երկրի երեսից ջնջվում է պաշտամունքային, ճարտարապետական և մշակութային մի առժե՞ք՝ առանց ուսումնասիրական աշխատանքների: Շուրջ 10-11հա զբաղեցրած խոշիվ կմերի գերեզամանցի մի ասկյունում ծվալում է Հայ մշակույթի գործիչների փոքրիկ պանթեոնը՝ հայության համար խորհրդանշական ու նվիրական վայրը:

Հնորհանդեսին ներկաները վերջում դիտեցին Սամվել Կարապետյանի վաղամեռիկ որդու՝ ռեժիսոր Տիրան Կարապետյանի՝ 2008-ին թողարկած «Լուսթյուն» վավերագրական ֆիլմը, որում ներկայացված է Խոջիվանքի գերեզմանոցի ոչնչացման պատմությունը:

Այսպիսին էր Սամվել Կարապետյանը, որը ողջ գիտակցական կյանքն ապրել է՝ ազգային արժեքների փրկության բեռը ուսերին առած:

ՍՈՒՐԱՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ
Լուսանկարները՝
Զ. ԸՌԸՈՅԱՆԻ

ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

ՎԱՐՆՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ` ՀՈՐԻ ՏԱԿԻՑ

Մեր երկիրը, հիրավի, բաց թանգարան է երկնքի տակ, և ցանկացած վայրում կհանդիպեք դարերի ու հազարամյակների պատմությամբ հուշարձանների: Ինչ խոսք, մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև հազարամյա պատմությամբ բնակատեղիները, որոնք էլ խոսում վկաներն են: Հայոց աշխարհը մարդկության կարևոր բնօրրաններից է:

ՀՀ Արարատի մարզի Մասիսի շրջանի Հայանիստ գյուղի հարավային մասում՝ ծովի մակերևույթից մոտ 840 մ բարձրության վրա, գտնվում է «Ոսկե բլուր» հնավայրը՝ Կուրարաքսյան (Շենգավիթյան) մշակույթին պատկանող վաղբրոնզեդարյան՝ լավ պահպանված բնակատեղիից մեկը (մ.թ.ա. 3500/3350–2600/2500 թթ.): Այս մշակույթին պատկանող հուշարձաններ շատ կան մեր երկրում, որոնցից առավել հայտնի է Շենգավիթը՝ Երևանում՝ Հրազդան գետի ձախ ափին, և որի հետ կապված մշակույթը կոչվում է նաև Շենգավիթյան: Համեմատաբար լավ են պահպանվել նաև Մոխրաբլուրը (Էջմիածնի մոտ), Ջրահովիտը, Հառիճը, Ագարակը և այլն:

Երևանից շուրջ 22 կմ հարավ-արևմուտք ընկած «Ոսկե բլուր» հնավայրը արհեստական բլուր-բնակատեղի է՝ շուրջ 2,6 հա մակերեսով: Մոտ 5500-5000 տարի

առաջ այստեղ մարդն է ապրել ու արարել՝ հիմնականում հում աղյուսից կառուցված բնակարաններում: Առաջին հնագիտական պեղումներն այստեղ կատարվել են 1975–1976 թթ.՝ հնագետ, պ. գ. դ. Էմմա Խանգադյանի (1922-2007)



ղեկավարությամբ: Սակայն հնավայրն իր մեջ բազում գաղտնիքներ է թաքցնում, և կար այն ուսումնասիրելու խնդիր: 2020-ից «Ոսկե բլուր»-ում գործում է հայ-ֆրանսիական հնագիտական արշավախումբը՝ ՀՀ ԳԱՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարության և Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի (CNRS) Archéorient լաբորատորիայի (UMR 5133) համագործակցության շրջանակում: Նույն թվականից հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբը հնավայրում պարբերական պեղումներ և ուսում-

նասիրություններ է կատարում: 2025թ. պեղումները մեկնարկել են սեպտեմբերին և ավարտվեցին հոկտեմբերի 8-ին: Այդ օրը հնագետներին այցելեցին ՀՀ-ում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյը և աշխատակիցներ: Նախօրեին աշխատանքներին ծանոթանալու նպատակով եղա հնավայրում: Պեղումները ղեկավարում են ՀՀ ԳԱՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) վաղ հնագիտության բաժնի վարիչ, պ.գ.դ. Ռուբեն Բադալյանը (հայկական կողմից) և Լիոնի Գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի ներկայացուցիչ, պ.գ.դ. Բերանժեթ Պերելլոն (ֆրանսիական կողմից): Արշավախմբի կազմում ընդգրկված են նաև ՀԱԻ վաղ հնագիտության բաժնի գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Արմինե Հարությունյանը, Լևոն Աղիկյանը, ՀԱԻ ճարտարապետական մոդելավորման խմբի գիտաշխատող Լիլիթ Տեր-Մինասյանը, Լիոնի հնագիտական ծառայության աշխատակից, հնակենդանաբան Օրելիեն Քրեյոյոն և Հայաստանի պատմության թանգարանի գլխավոր ֆոնդապահ Սոֆա Հովսեփյանը: Այցի պահին գիտաշխատողները չափազրույցներ էին կա-

տարում, գտնված հնագիտական նյութերն էին ուսումնասիրում, իսկ երկար ժամանակ խմբի հետ աշխատող բանվորներն իրենց գործին էին: Հորի շերտի տակից բացվել էր աղյուսե պատի մի հատված. մաքրում էին: 5000 տարի հողն իր մեջ գրեթե անաղարտ է պահել կավից պատրաստված հում աղյուսե պատը: Եթե Շենգավիթ հնավայրում



բնակարանների հիմքերը քարից են և այս պատճառով առավել լավ են պահպանվել, այստեղ հիմնականում կավե աղյուսներից են: Քարե հիմքերը քիչ են՝ հավանաբար տարածքում քարի պակասի պատճառով: Այլ հատվածներում ևս՝ մինչև 1մ բարձրությամբ պատեր դեռ պահպանվել են: Այս տարի աշխատանքները շարունակվել են հուշարձանի 4-րդ և 5-րդ տեղամասերում, ինչպես նաև բացվել է նոր՝

6-րդ հատվածը: Պեղումների ընթացքում, բացի նշված պատերից, բացվել են հորեր, հայտնաբերվել են Կուր-արաքսյան շրջանին բնորոշ խեցեղենի բեկորներ, քարե գործիքներ և այլն: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գրեթե 5000-ամյա լավ պահպանված կավե օջախը: Վաղբրոնզեդարյան օջախի հարևանությամբ

բացվել է թրծած աղյուսով շարված միջնադարյան թոնիր: Սա խոսում է այն մասին, որ հուշարձանի կառույցներն օգտագործվել են նաև միջնադարում, և դրանք կառուցողների վարպետության մասին: Արշավախմբի համադրված և հարակից հնավայրը Մասիսի տարածքում առաջին միակ հուշարձանն է, որ պատ-

կանում է Կուր-արաքսյան մշակույթին և շատ կարևոր նշանակություն ունի Արարատյան դաշտի վաղբրոնզեդարյան մշակույթի ուսումնասիրության համար: Հավելեց նաև՝ այստեղ պեղումները շարունակվելու են հետագայում ևս: Կարևորվեց նաև հուշարձանի հետազոտությանը: Այս հարցում իր հիմնական դերն ունի ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

ԱՐԴԵՆ 32 ՏԱՐԻ

«Ես չգիտեմ առավելության այլ նշաններ, բացի բարությունը»:
Բեթովեն

Բարեգործություն իրականացնող «Հուստ տուն բարեգործական հիմնադրամ»-ը գործում է Երևանում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Այն ստեղծվել է 2017 թվականին՝ իրավահաջորդելով Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության կողմից նախաձեռնած բարեգործական ծրագրերը: Դրանց շրջանակում 1994-ից գործող «Գթության խոհանոց» մայր ծրագիրն իրականացվում է ամեն տարի՝ հոկտեմբերից մայիս ընկած ժամանակահատվածում: Ծրագրի շրջանակներում Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի և հարակից վայրերի շուրջ 220 տարեց, միայնակ և սոցիալապես անապահով թաղաքացի, այդ թվում Արցախից տեղահանված, սիրիահայ ներգաղթյալ և երևան համայնքի հաշմանդամություն ունեցող, ծնողազուրկ և սոցիալապես անապահով անձինք օրական մեկ անգամ տաք, բարձր կալորիականությամբ սնունդ են ստանում:

Հոկտեմբերի 24-ին «Հուստ տուն բարեգործական հիմնադրամ»-ի տարածքում տոնական տրամադրություն էր տիրում. բացվեց «Գթության խոհանոց» բարեգործական ծրագրի հերթական՝ 32-րդ շրջանը: Ավանդույթի համաձայն՝ յուրաքանչյուր տարի այս առթիվ տոնական արարողությանը ներկա են լինում նաև ծրագրի իրականացման հետ կապված պաշտոնատար անձինք, բարերարներ, շահառուներ, հյուրեր, մշակութային խմբեր ու անհատներ: Մինչ տոնական արարողությունն սկսելը՝ ծրագրի շահառուների, պաշտոնական հյուրերի և աջակիցների մասնակցությամբ տնկվեց բարեկամության եղևնին:

Բացելով տոնական արարողությունը՝ ներկաներին ողջունեց և օրվա առթիվ շնորհավորեց «Հուստ տուն բարեգործական հիմնադրամ»-ի գործադիր տնօրեն Սովետ Պողոսյանը: Տոնական օրն իրենց երգերի ու պարային զեղեցիկ կատարումով ողջունեցին կենտրոնում գործող «Հույսով լի և

առողջ մանկություն» ծրագրի երեխաները, որոնք հիմնականում արցախցիներ են: Ներկա պաշտոնյաներից ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՄՀՆ) ընտանիքի սոցիալական զննահատման բաժնի պետ Էդգար Բզնունին, Սփյուռքի գլխավոր հանձնակատար Ջարեհ Սիմանյանը, Գերմանիայում «Գթության խոհանոց» կառավարման



կոմիտեի անդամներ Միխայել Լենգեն ու բողոքական եկեղեցու ղեկան Ուրսուլա Ռիխտերը, «Հուստ տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Լուսինե Ագարյանը: Բոլորի խոսքում կարևորվեց բարեգործական այս կառույցի գործունեությունը: Միխայել Լենգեն և Ուրսուլա Ռիխտերը ներկայացրին իրենց կառույցի մասին և վստահեցրին՝ մշտապես աջակցելու են «Հուստ տուն բարեգործական հիմնադրամ»-ին: Էդգար Բզնունին ԱՄՀ նախարարության անունից շնորհավորեց օրվա առթիվ՝ մշելով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շուրջ 4 տարի է՝ համագործակցում է կենտրոնի հետ: Հայտնեց շնորհակալություն կենտրոնին՝ բարեգործական ծրագրերը հաջող իրագործելու համար: «Պարոն Պողոսյան, Դուք մեծ ջանք ու եռանդ, կյանք եք ներդրում այս ծրագրերը հաջողությամբ իրագործելու համար, և մենք ուրախ կլինեմք հետագայում ավելի մեծ աջակցություն ցուցաբերելու համար», - ասաց է. Բզնունին:

Ջարեհ Սիմանյանն իր խոսքում, շնորհավորելով «Գթության խոհանոց»-ի բացման 32-րդ շրջանի բացման առթիվ, շնորհակալություն հայտնեց կենտրոնի անձնակազմին, բարերարներին, կամավորներին, աջակիցներին՝ հավելելով. «Ձեր անմնացորդ նվիրումի շնորհիվ ամենօրյա ջերմություն ու հոգատարություն ենք հասցնում նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, և թող ձեր բարությունը լինի շարունակական...»: Հավելեց նաև՝ «Հուստ տուն» բարեգործական հիմնադրամը և Գերմանիայում գործող «Գթության խոհանոց» կառավարման կոմիտեն տարիներ շարունակ իրենց աշխատանքով ապացուցում են, որ բարեգործությունը ասիմաններ չի ծանաչում: «Նրանք միավորում են հայրենիքն ու Սփյուռքը մեկ ընդհանուր նպատակի շուրջ՝ օգնության ձեռք մեկնելու նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Սա հիմնալի օրինակ է, թե ինչպես կարելի է Սփյուռքի ներսով ծառայեցնել հասարակական բարօրությանը», - նշեց նա: Հյուրերի կազմում էին նաև գերմանական Շվեբիշ Գմյունդի ազգային բարձրագույն դպրոցի (Schwäbisch Gmünder Volkshochschule e.V.) տնօրեն Ինգրիդ Հոֆմանի գլխավորած 23 հոգանոց պատվիրակությունը: Այս բարձրագույն դպրոցի 2025թ. երկրորդ կիսամյակի շրջանակում Հայաստանը ներկայացվել է որպես ուսումնական շրջանի առանցքային թեմա՝ նպատակ ունենալով խթանել հետաքրքրությունը հայկական մշակույթի, պատմության, հասարակության և սոցիալական խնդիրների վրա: Հյուրերն այստեղ էին նաև «Հուստ տան» շենքի կառուցման 20-ամյա հոբելյանակն միջոցառումներին ընդառաջ: Շվեբիշ Գմյունդի ազգային բարձրագույն դպրոցի (Schwäbisch Gmünder Volkshochschule e.V.) տնօրեն Ինգրիդ Հոֆմանը, ողջունելով ներկաներին, շնորհակալություն հայտնեց հայ մանուկներին, որոնք երգով ու պարով օրն առավել տոնական դարձրին: «Շնորհակալություն այս հրաշալի ընդունելության համար, որից տպավորված ենք: Շնորհակալություն պարոն Միխայել Լենգենին, որը միտք է

տվել ծանոթանալ Հայաստանի հետ, և մեր արվեստի դպրոցի երեխաները նկարել են հայ երեխաների համար», -ասաց նա և իրենց հետ բերած նվերը հանձնեց Մ. Պողոսյանին՝ շնորհակալություն հայտնելով նաև թարգմանիչ Լենային: Կարևորելով համագործակցությունն այդ դպրոցի հետ՝ Մ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց այցի և նվիրատվության համար: Սակայն առավել կարևորեց գերմանական այդ կրթօջախի դերը՝ ասելով. «Մտնում են նրանց բարձրագույն դպրոց և ամբողջ ճեմասրահում տեսնում են մեր կենտրոնի արցախցի երեխաների նկարներն են պատերին...»:

Արարողության վերջում Մ. Պողոսյանը շնորհակալագրեր հանձնեց «Հուստ տուն բարեգործական հիմնադրամ»-ի աջակից անհատներին՝ օդաչու Բագրատ Խաչատրյան, Անահիտ Բալաբեկյան, Ալբերտ Տոնեյան, Էջմիածնից Ղազարյանների ընտանիքը, այլոք: Արարողության ընթացքում իրենց պարային հրաշալի կատարումներով ներկաներին ողջունեցին «Բելլա» պարային հա-



մույթի հրեշտակակերպ փոքրիկ պարուհիները: Ազգագրական երգերի կատարումով հանդես եկավ «Գաթա Բենդ» խմբի հիմնադիր, սարկավազ Անդրանիկ Մանուկյանը՝ պարի հանելով «Հույսով լի և առողջ մանկություն» ծրագրի երեխաներին ու հյուրերին: Տոնական արարողությունից հետո Մ. Պողոսյանը պատասխանեց գերմանացի հյուրերի հարցերին: Եղավ նաև տոնական հյուրասիրություն:

Ջոհրաբ ԸՈՒՆՈՅԱՆ

ԱՆՍԱՀ ՎԵՐՈՍՆԵՐ

ԸՆԿԱՎ ԱՐՅԱՆԻ ՄԱՀՄԱՆԻՆ



«Քաջերի յարութիւնն է մահը»:

Պարտէզին Նժդեհ

Քաջաթաղի շրջանի Աղավնո գյուղում էր ընտանիքով բնակվում Արմեն Արամի Իսախանյանը, որն այս բնակավայրի առաջին բնակիչներից էր ու կարևոր դեր ունեցավ համայնքի կայացման գործում: Արցախյան առաջին պատերազմի երիտասարդ մասնակիցն անմասն չէր մնում Հայոց սահմանի պաշտպանության գոր-

ծում նաև հրադադարից հետո, երբ կար անհրաժեշտություն: Այսպես եղավ նաև 2020թ. սեպտեմբերի 27-ին:

Արմենը ծնվել է 1972թ. հունիսի 1-ին ՀՀ Նոր-Հաճն քաղաքում: 17 տարեկան էր, որ առաջին անգամ զենք վերցրեց ու կամավորական ջոկատի կազմում անցավ Արցախ՝ Բերդաձոր: Մինչև 1994թ. զարուհը մարտնչեց Արցախի տարբեր վայրերում, մասնակցեց Մարտակերտի, Ֆիզուլիի, Հորադիզի և այլ տարածքների ազատագրական ու պաշտպանական մարտերին: 1993 թվականին Մատաղիսում որովայնի հատվածում ստացել է բեկորային վիրավորում: Կազդուրվելուց հետո նորից մարտական ընկերների հետ էր, և կերտում էին Արցախի ազատագրումը: Պատերազմի ավարտից հետո ամուսնացել է և շուտով դարձյալ Արցախում էր՝ Քաջաթաղի շրջանի Աղավնո գյուղում՝ արդեն բնակիչ ու շենացնող: Ազատագրած հայրենիքը պետք է վերահայանար:

1996 թվականից ծանաչել են Արմենին, իր բնակավայրի հոգսերով էր ապրում, աշխատում: 2020թ. ամռանը հանդիպեցի Արմենին. ուղեկցեց իրենց գյուղում կառուցվող նոր բնակելի տների

շինհրապարակ: Ուրախ էր՝ թեկուզ կար համավարակի խնդիրը, բայց գյուղում տուն ու դպրոց էր կառուցվում: «Հորեղբայրս՝ Արմենը, բնավորությամբ բարի, կատակասեր և շատ հոգատար անհատականություն էր: Նրա համար հայրենիքն սկսում էր իր ընտանիքից: Արմենի նվիրվածությունն իր հարազատներին, ընկերներին և բարեկամներին սահմաններ չէր ճանաչում, բայց միևնույն ժամանակ չէր հանդուրժում սուտն ու անարդարությունը: Նա իր առանձնահատուկ հատկանիշներով մարդկային փոխհարաբերություններում մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր: Այն մարդկանցից էր, ովքեր պատրաստ էին ամբողջ աշխարհի բեռը տանել իրենց ուսերի վրա», - ասում է եղբոր դուստր Լենա Իսախանյանը:

2020թ. սեպտեմբերյան պատերազմը դարձյալ ոտքի հանեց շատ քաջաթաղցիների՝ պահեստազորայիններ ու կամավորականներ, աշխարհագրոյային: Պատերազմի հենց առաջին օրը շատերը վերստին դարձան հայրենիքի պաշտպանության զինվորը, ինչպես՝ 2014-ի օգոստոսին, 2016-ի ապրիլին: Առաջնագիծ մեկնեց

նաև Արմենը՝ հաշվի չառնելով իր առողջական խնդիրները (ծախ երիկամի բացակայության փաստը): Մարտադաշտում էին նաև երկու որդիները՝ Միքայելն ու Արմանը, եղբայրն ու եղբորորդիները: Ջաբրայիլի ու Ֆիզուլիի հատվածներում է մարտնչել: Մարտերի ընթացքում իրենց ջոկատով բազմիցս հայտնվել են հակառակորդի շրջափակման մեջ, սակայն պաշարել են տղերքը՝ մահ կամ ագատություն սկզբունքով: Արմենը հարազատների հետ վերջին անգամ խոսել է հոկտեմբերի 15-ին, իսկ 2 օր անց Ֆիզուլիի Ղարաբազար կոչվող վայրում որովայնի հատվածում ստացել է բեկորային վնասվածք և ընկել է հերոսի մահով հանուն հայրենիքի: Որդիների կողմից 4 ամսից ավել տևած որոնողական աշխատանքներից հետո հերոս Արմենի աճյունը գտնվել է ճանաչվել է 2021 թվականի փետրվարի 24-ին աղբբեջանցիների կողմից տրված 106 մարմինների միջից: Աստծո կամքով վերջապես հողին հանձնվելուց հետո մեր հերոսի հոգին կվերգտնի իր հանգստությունը: Արմենի հուղարկավորությունը տեղի ունեցավ Տեղ գյուղի հանգստարանում՝ հե-

րոսների շիրիմների մոտ: Լիբանանի «Արցախ Ֆոնտ» կազմակերպության ներկայացուցիչ Մարալ Մահսերեճեանը բարեգործական ծրագրերով հաճախ էր այցելում Քաջաթաղ, նաև Աղավնո, նրան իր գործում օգնում էր Արմենը: Ցավ է հայտնում՝ գրելով՝ «Աստուած հոգիդ լուսաւորէ Արմէն ճան: Փառք մեր հերոսներուն»: Պատերազմի օրերին Արմենի ընտանիքը՝ մոր՝ Էմմայի հետ, դուրս էին եկել Աղավնոյից: Հետո նորից վերադարձան այնտեղ: Մայրն ասում էր. «Ամուսնուս ու որդիներիս կառուցած ու որդուս արյան գնով պահած տունը չեմ կարող թողնել թուրքին ու մինչև վերջին շունչը պետք է ապրեմ իմ գյուղում ու իմ տանը»: Սակայն մեծ ցավ է. այսօր ամբողջ Արցախն է հայազուրկ: Հայազուրկ ու ավերակ է Աղավնոն՝ Արցախի դարպասը, որը դարեր շարունակ Պատմական Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Աղահեճք-Քաջաթաղ գավառի հայաշեն բնակավայրերից էր, որն ազատագրվեց 1992-ի մայիսի 18-ին՝ Բերդոր-Լաչինի հետ, և այդ օրվանից էլ Արցախը ցամաքային ճանապարհով՝ «Կյանքի ճանապարհ»-ով, միացավ Մայր Հայրենիքին:

ՎԱԿՈՒՆԻՍՅԻ ԺԻՐԱՅԻՆ



Չորս տարի առաջ՝ 2021թ. հոկտեմբերի 15-ին, Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղում կայացավ խաչքարի բացման, օծման և օրհնման արարողություն, որին ներկա եղան նաև Արցախի Հանրապետության Քաջաթաղի շրջվարչակազմի ներկայացուցիչներ, տարբեր բնակավայրերի բնակիչներ: 2020թ. հուլիսին դեռ մերն էր ամբողջ Արցախը՝ Քաջաթաղի շրջանով հանդերձ: Իսկ շրջանի կազմավորման առաջին տարիներից գործում էր շրջանային զինկոմիսարիատը, ու Հայոց երկիրը վերահայացնող բանակի ենթակա երիտասարդները գորակոչվում էին բանակ: 2020թ. հուլիսին բանակ գորակոչվեց նաև Քաջաթաղի շրջանի Վակունիս գյուղի բնակիչ, 18-ամյա Ժիրայր Գագիկի Մարգարյանը, որը 6 քույրերի միակ եղբայրն էր ու ավագը: Հպարտ էր, որ արդեն զինվոր է և իր քույրերի, ողջ հայ աղջիկների պաշտպանն է դառնալու, և ժպտը դեմքին

մնացած զորակոչիկների հետ մատեց դեպի Ստեփանակերտի հավաքական մեկնող մեքենան: Նույն օրն էլ մասնակցեց վիճակահանության և ծառայության անցավ Ջրականի զորամասում: 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը շատ զինվորների կյանք խլեց, շատերը դարձան հաշմանդամ, եղան անհետ կորածներ: Ընդամենը 2 ամիս ծառայած Ժիրայրն էլ մասնակցեց պատերազմին ու թրծվում էր ռազմի դաշտում: Հոկտեմբերի կեսերից ծնողներն այլևս չկարողացան կապ հաստատել իրենց միակ որդու հետ: Սակայն հույս ունեին՝ միգուցե տուն կգա: Ավաղ, 9 ամսվա սպասումները չարդարացրին ծնողների ու քույրերի հույսը: Բանակ գորակոչվելուց մեկ տարի անց գտնվեց քաջորդու աճյունը: 2021 թ. հուլիսի 21-ին զինվորական կարգով Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի գերեզմանոցում հուղարկվորեցին Անմահ հերոսին:

Ժիրայր Գագիկի Մարգարյանը ծնվել է 2002 թ. հունվարի 7-ին Վահրամաբերդում: Նույն թվականի մարտին Գագիկ և Նաիրա Մարգարյան ամուսինները որդու հետ տեղափոխվեցին և բնակություն հաստատեցին Քաջաթաղի շրջանի Վակունիս գյուղում, որը շրջանի հյուսիսային թևում է՝ Շալուա գետի ձախակողմյան բարձրադիր հարթության վրա: Գյուղն ազատագրվել էր 1993 թվականի մարտի 31-ին Սիսական գնդի մի ջոկատի կողմից: 11 քաջորդի, այդ թվում նաև ջոկատի հրամանատար Վուրգ Ոսկանյանը մարտիրոսվեցին գյուղի ազատագրման համար: Թշնամու ականանետի արկից պայթած մեքենան, որով ջոկատի տղաները հասել էին Վակունիս, յուրահատուկ հուշարժան էր դարձել՝ ի հիշատակ Անմահ հերոսների: Վակունիսը վերաբնակեցվեց 1995 թվականին, և շուտով այստեղ բացվեց դպրոց, որն անվանակոչվեց ի պատիվ Վուրգ Ոսկանյանի: Մեքենայի մոտ նաև խաչքար տեղադրվեց՝ նահատակ տղաների անուններով: Վակունիսում հասակ առավ Ժիրայրը, այստեղ

ծնվեցին քույրերը: Գյուղի դպրոցում սովորեց ու ավարտեց միջնակարգը: Աշխատանքի բերումով հաճախ էի այցելում նաև Վակունիս, ներկա լինում դպրոցական հանդեսներին: Վուրգի ու մնացած հերոսների ոգով էին դաստիարակվում դպրոցականները, նրանց հետ էր նաև Ժիրայրը, որը միշտ գլխավոր դերում էր, նաև ծնողների օգնականն էր տնտեսությունում, ձգտում էր հնարավորինս աջակցել հորը, որ բազմազավակ ընտանիքը բարեկեցիկ կյանքով ապրեր: Քույրերի հպարտությունն էր, պաշտպանը... Սակայն 2021թ. հոկտեմբերի 15-ին Վահրամաբերդում հոգևոր հայրը մյուռնոված ջրով ու զինով օծեց ու օրհնեց հուշաքար-խաչքարը՝ նվիրված Ժիրայրի և բոլոր Անմահ հերոսների հիշատակին: Ներկա էին նահատակ-զինվորի ծնողները, քույրերը, հարազատ-բարեկամներ, զինվորականներ, Վահրամաբերդի գյուղական համայնքի ղեկավար Կարեն Արշակյանը, վահրամաբերդցիներ, այլք: Հերոսի փոքրիկ քույրերը՝ Ալիսան, Մարիամը, Ալվարդը, եղբոր նկարով շապիկներ հագած, ներկա էին հոգևոր արարողությանը: Ջրուցում են նրանց հետ. «Ժիրայրը մեր պաշտպանն էր, անիծվի՝ պատերազմը...»: Տերունական աղոթքով ու շարականներով հոգևոր հայրը կատարեց խաչի օծման ու օրհնման արարողությունը՝ օգնականները Ժիրայրի բարեկամ երիտասարդներ էին, որոնք էլ կտրեցին ժապավենը: Ավարտելով արարողությունը՝ հայ եկեղեցու ներկայացուցիչը փառք տվեց բոլոր նահատակներին՝ նշելով հանուն հայրենիքի ընկածները հերոսներ են և ընդունելի Աստծո կողմից: Նշեց՝ խաչը միշտ է եղել զորավոր, և նոր օծված ու օրհնված հուշաքարն այսուհետ սրբատեղի է:

Քաջաթաղի շրջանը 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմում տվեց 78 զոհ, այդ թվում անհետ կորածներ կան: Պարզ է՝ մեծ ցավ է յուրաքանչյուր քաջորդու նահատակությունը, սակայն առավել ցավ է ու

խռովք կորուսյալ հայրենիք ունենալը: Հետագա տարիներին էլ, մինչև 2023թ. սեպտեմբեր, քաջաթաղի տղաները՝ ժամկետային ու պայմանագրային զինծառայողներ, Արցախի Պաշտպանության բանակում էին, ու դարձյալ շրջանը զոհեր ունեցավ: 2020թ. 44-օրյա պատերազմում նահատակվեց նաև Վակունիսի դպրոցի զինղեկ, Ժիրայրի ուսուցիչ ու ավագ ընկերը՝ Հարութ Ալեքսանդրի Պետրոսյանը: Հայոց բանակի լեյտենանտը ծնվել է 1990թ. փետրվարի 6-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում: Սովորել է թիվ 5 միջնակարգ դպրոցում: Ջուզահետ հաճախել է ըմբշամարտի պարապանմանքների, աչքի ընկել, պարգևատրվել: 2008թ. զորակոչվել է ԱՀ Պաշտպանության բանակ: Ծառայությունն անցել է Արցախի հարավային զորամասերից մեկում՝ Արա Լեռում: 2007թ. ընդունվել է Արցախի պետական համալսարանի Ֆիզկուլտուրայի ֆակուլտետի ՆՁՊ բաժինը (հեռակա): Ուսումն ավարտելուց ու զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Ննգի գյուղի դպրոցում՝ որպես ՆՁՊ ուսուցիչ: Ամուսնանալուց հետո կնոջ և որդու հետ տեղափոխվել են Քաջաթաղի շրջան: Աշխատում էին Վակունիսի հիմնական դպրոցում: Պատերազմի առաջին օրվանից մարտադաշտում էր ու բազում սխրամքներ կատարելուց հետո հերոսաբար մարտիրոսվել է պատերազմի վերջին օրը՝ 2020թ. նոյեմբերի 9-ին Մարտունին պաշտպանելիս: Հետմահու պարգևատրվել է «Արիության մեդալ»-ով և «Մարտական խաչ» շքանշանով: Նույն նոյեմբերի 9-ին Մարտունին պաշտպանելիս հերոսաբար մարտիրոսվեց նաև Բերդորի բնակիչ, Հայոց բանակի փոխգնդապետ Վահագն Վահանի Բաբայանը, իսկ նրա ավագ եղբայրը՝ Վանիկը, նույն օրը նահատակվեց թշնամու կողմից Բերդորը ռմբակոծելու պահին:

Ջոհրաբ ԸՈՔՈՑԱՆ

ՈԱԶՄԻԿ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱՔՆԵՐՈՒՄ

Հրանտ Մաթևոսյանի անվան մշակութային կենտրոնում հավաքվել էին ԵՊՀ հումանիտար քոլեջի և Հայ-ամերիկյան համալսարանի ուսանողները՝ ունկնդրելու բանասիրական գիտությունների թեկնածու, լեզվաբան, թարգմանիչ, հեքիաթների ուսումնասիրող Արմինե Դանիելյանի բանախոսությունը՝ «Թագավորի ախիլիս ու ուր ասքյները»։ Ջազմիկ կնոջ կերպարը հայ ժողովրդական հեքիաթներում» թեմայի վերաբերյալ։

Ամսօրյակա՛ն կապ ստեղծելով լսարանի հետ՝ հեղինակը հետաքրքրվեց, թե նրանցից յուրաքանչյուրը ինչքանով է կապված հեքիաթների աշխարհի հետ, ինչքանով է շփվում այդ հերոսների հետ, և արդյո՞ք նրանք կարող են հեքիաթները։

Նրա աշխատությունը նվիրված է կին հերոսի կերպարի ուսումնասիրությանը և բացահայտմանը պատերազմական համատեքստում՝ ըստ հայ ժողովրդական հեքիաթների։

Հեքիաթներն արտացոլում են մեր մտածելակերպը, սովորությունները, որում ապրել են մեր պապերն ու տատերը, ընդհանրապես մեր ժողովուրդը։

Կնոջ թուլությունը պատկերելը հայկական բանահյուսության հիմնական մոտիվներից է։ Ռազմի դաշտում կինը ծայնագուրկ է, գրեթե միշտ հպատակվում է տղամարդուն։ Կնոջ ուժը և հմտությունները հաճախ անընդունելի կամ անմեղելի են։ Պատումի գարգացման ընթացքում նա կամ ստիպված է խորամանկել, կամ փոխակերպվել տղամարդու։ Ժողովրդական պատումներում այս երևույթն ունի իր պատմամշակութային հիմքերը, որոնք պահպանվել են առայսօր։ Միևնույն ժամանակ հայկական հեքիաթի հերոսուհին հաճախ խաղաղության հաստատման գրավականն է ու նախաձեռնողը։

Ժողովրդական բանահյուսությունն ընդհանրապես բոլոր ժամանակներում ծառայել է որպես տվյալ ազգության և մշակույթի ճանաչման բանալիներից մեկը։ Հայկական հրաշապատում հեքիաթը բացառություն չէ։ Բանահյուսությունը պատերազմի սարսափները քողարկում է սիրահար զույգերի, արքունքի տարիքի պատանիների, թագավորի բնահաճույքների հետևում՝ ընթերցողին թողնելով որոշ ծածկագրված հուշումներ, որպեսզի վերջինս վերծանի թաքնված նրբամաստները։ Այդ պատառիկներն են օգնում պատկերացում կազմելու հեքիաթը հեղինակած ժողովրդի մտածելակերպի, աշխարհայացքի, պատմական ու սոցիալական զարգացման, արժեհամակարգի ձևավորման մասին։

Ըստ հետազոտական տվյալների՝ ամենահին հեքիաթը, որը մինչև օրս պատմում են, 6000 տարեկան է, այսինքն՝ հեքիաթները գոյություն են ունեցել այն պահից

ի վեր, երբ հայտնվել են առաջին պատմողն ու առաջին ունկնդիրը։ Մոգականի ու անհավանականի կողքին տեղ գտած առօրյա, սովորական տարրերի շնորհիվ հեքիաթները դառնում են հայ ժողովրդի ամենօրյա կյանքին համահունչ ու հարմար։ Գուցե հենց դրա շնորհիվ է, որ հեքիաթները գոյություն են ունեցել 1000-ամյակներ շարունակ։ Որոշ տեսաբաններ պնդում են, որ հեքիաթների երկարակեցությունը պայմանավորված է ոչ թե անցյալի փորձը պահպանելու ծիրով, այլ ներկա ժամանակներում ընթերցողի պահանջները բավարարելու ճկուն հմտությամբ։ Դրա համար էլ ամենակին գարնանալի չէ, որ «անհանգիստ ժամանակներում» հեքիաթները հաճախ ծառայում են որպես քարոզչության հզոր գործիք։ Դրանք միևնույն ժամանակ նաև անփոխարինելի սպեղանի են ետպատերազմական հետևանքներին ու վնասներին անդրադառնալիս։ Հաճախ պատերազմը ստեղծում է իր ուրույն «դիցաբանությունը»։ հրաշապատում աշխարհը թույլ է տալիս, որ պատերազմի բռնությունը, հավաքական տառապանքը, վիշտը, տրավման ներկայացվեն հուզական ու կողմնակալ գունավորմամբ։

Հեքիաթները մեզ կողավորված ուղերձներ են հղում։ Հրաշապատում աշխարհն ունի իր կանոնները. հեքիաթը պետք է միշտ երջանիկ ավարտ ունենա։

Բանախոս Արմինե Դանիելյանն անդրադարձավ կնոջ կերպարին այն հեքիաթներում, որոնք ունեն «ռազմական» մոտիվ։ Հայ ռազմիկ կանանց կերպարն ակնհայտ տարբերվում է, օրինակ՝ հնդկական կամ լատինամերիկյան բանահյուսություններում հանդիպող կին հեքիաթներին։ Հայ ժողովրդական հեքիաթներում ռազմիկ կանայք օժտված են հրաշապատում հերոսին հատուկ բազմաթիվ հատկանիշներով։ Նրանք քաջ են, հավատարիմ, ճարպիկ, հանուն իրենց երկրի ու թագավորի պատրաստ են անձնագոհության։ Ձինվորի կերպարն ամբողջական են դարձնում նրա «օգնականները»՝ զորեղ թուրը, կացինը, հանդերձանքը (զրահ, վահան), անդալաճան ձին և այլն։ Կին հերոսին երբեմն կարող է հետևել նվիրյալ զինվորներից կազմված բանակը, ընդ որում՝ մարտիկ կանայք։

ՀՀ ազգային ակադեմիայի հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 14-րդ հատորում, որը նվիրված է պատմական Մեծ Հայքի Վասպուրական ազգագրական շրջանին, կարող ենք գտնել «Ջան-փուլատը» հեքիաթը, որը պատմում է թագավորի և նրա երեք դուստրերի մասին. «Եսա թագավորն ունի իրեյք խատ խուրն-

խրեղեն աղջիկ...»։ Մի օր վեզիրները հայտնում են թագավորին մոտալուտ աղետի մասին։ Ջան-փուլատ անունով թշնամու մասին, որ արդեն բնաջնջել է մյուս թագավորությունները և սպառնում է իրենց երկրին։ Երկաթե հրեշը վերահաս պատերազմի փոխանվանական խորհրդանիշն է։ Թագավորի ավագ և միջնեկ աղջիկները հրաժարվում են սատարել իրենց հորը, և ստացված լուրերը չեն մտահոգում նրանց։ Օգնության է հասնում կրտսեր դուստրը, որը խոստանում է հորը հաղթել թշնամուն («աշխարհ կազատեն...»)։ Դստեր պահանջով հայտարարվում է զորահավաք. «Թագավորու հրամանն է, ինչ կանդար որ խորոտ աղջիկ կա էսա քյաղաք»՝ բյուրյուն էլ թող

հայտնում է իր սիրո մասին և թագավորից խնդրում նրա դստեր ձեռքը։

Հեքիաթի սյուժեն մոր ընթացք է ստանում։ Քաջ զինվոր, համարձակ առաջնորդ, կտրիժ հրամանատար աղջկա կերպարին գալիս է փոխարինելու թագավորի անտրտունը, խոնարհ, հնազանդ աղջիկը, հենց ինչպիսին կանայք հաճախ պատկերվում են հայ բանահյուսության մեջ։ Նրանց ճակատագիրը հաճախ որոշում են տղամարդիկ։ Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, և թագավորն իր աղջկան ամուսնացնում է թշնամու հետ։ Հերոսուհին այնև անպաշտպան է ու ծայնագուրկ։ Հրեշը տանում է աղջկան ծամերից կախում օձորքից, որ մեռնի, մարդ էլ չիմանա, որ ազատի։ Երբ Ջան-փուլատը գնում է ցախ հավաքելու ու մեռնակ է թողնում մազերից կախված հերոսուհուն, հայտնվում է Չաչալ-բագրյանը։ Վաճառականը խղճում է աղջկան, կտրում է կապանքները և տանում իր տուն։ Պարզվում է, որ տարածված ավանդույթի համաձայն՝ վաճառականի դուստրերը թաշկինակներ են գործում ու կախում են տան դարպասից։ Անցող տղաները, եթե հավանում են թաշկինակը, ամուսնանում են այն գործած աղջկա հետ։ Հեքիաթի հերոսուհին էլ է գործում

չտեսնված մի հրաշալի թաշկինակ, որ գրավում է այդ քաղաքի թագավորի տղայի աչքը, և թագաժառանգը ընտրում է իր կողակցին։ Չնայած աղջիկը պարբերաբար զգուշացնում էր նորաթուխ ամուսնուն իրեն հետապնդող թշնամու մասին, նրա հորդորները մնում են անարձագանք։ Ու մի գիշեր էլ Ջան-փուլատը գտնում է հերոսուհուն։ Նա արդեն մայր էր, հուր-հրեղեն լաճ տղա էր բերել, որը լալիս էր, և մայրն ուզում էր նրան կուրծք տալ։ Հրեշը փորձում էր նրան տանել և գլուխը լվանալ։ Մայրը խնդրում է երեխային կերակրել, մոր միայն գնալ։ Միայնակ մնալով թշնամու դեմ՝ աղջիկը կրկին վերագտնում է իր ուժն ու համարձակությունը, սպանում երկաթե հրեշին, ամուսնուն պատմում իր հաղթանակի մասին, խոստովանում, որ ինքն էլ է թագավորի աղջիկ, և հեքիաթը ստանում է իր տրամաբանական երջանիկ ավարտը։

Նույնաման մոտիվ ունի նաև պատմական Հայաստանի Տուրուբերան (Տարոն) նահանգի չորս գավառներից մեկի՝ Մշո դաշտի ժողովրդական հեքիաթներից «Յոթ գողեր և թագավորի ախիլիս»-ը։ Հեքիաթը պատմում է երեք որդի և մեկ դուստր ունեցող թագավորի մասին։ Թագավորությանը սպառնում են գողերը։ Որդիների ջանքե-

րը՝ պաշտպանել երկիրը, չեն պակասում հաջողությամբ։ Դուստրը հասկանում է, որ միայն ինքը կարող է փրկել երկիրը։ Հնարամիտ աղջիկը դարպասների մոտ փոս է փորում, ինքն էլ թաքնվում դռան ետևում, ու երբ հայտնվում են թշնամիները, մեկ առ մեկ հաշվեհարդար է տեսնում նրանց հետ։ Ավագակների կրտսեր եղբայրը մագապուրծ փախչում է աղջկա թակարդից, խարդախության դիմում։ Ծալված, չքեղ հանդերձանքով գալիս է և խնդրում թագավորի աղջկա ձեռքը։ Ինչպես միշտ, թագավորը տալիս է իր համաձայնությունը։ Աղջիկը փաստացի երկրի պաշտպանն է միայն անհանգիստ ժամանակներում, իսկ խաղաղ ժամանակ վճռորոշ է տղամարդու խոսքը։ Դուստրը ճանաչում է իր մոր «խնամակալին», բայց չի կորցնում իր համարձակությունը։ Մի քանի օր ճամփա գնալուց հետո ավագակը որոշում է աղջկան կապել ծառին ու տիրանալ նրան։ Սակայն թոհուրեռի է սկսվում, ծիերից մեկը փախչում է, ավագակը վազում է նրա ետևից, ու հենց այդ պահին ճանապարհով անցնող քարավանի քարավանապետին աղջիկը խնդրում է փրկել իրեն։ Քարավանապետը աղջկան թաքցնում է բեռների մեջ ու փրկում։ Թագավորի տղան մոտակայքով անցնելիս տեսնում է աղջկան, սիրահարվում ու որոշում ամուսնանալ նրա հետ։ Հերոսուհին մի քանի պայման է դնում թագավորի տղայի առաջ. կառուցի պողպատե ապարանք՝ պողպատե դմբերով ու սանդուղքներով, բակում երկու գամփռ շուն կապի և առանց կնոջ համաձայնության ոչինչ տուն չբերի։ Թագավորի տղան կատարում է սիրեցյալի բոլոր պահանջները։ Ամեն անգամ շուկայից արված գնումները ստիպված էր վերադարձնել կնոջ պահանջով։ Կինը ոչ մեկին չէր հավանում. նա դեռ սպասում էր ավագակի վրեժին։

Մի անգամ թագավորի տղան առանց կնոջը զգուշացնելու մի աքլոր է բերում ու թողնում բակում։ Պարզվում է՝ կերպարանափոխված ավագակն է։ Ամուսնու կյանքը փրկելու համար աղջիկը համաձայնվում է հեռանալ թշնամու հետ, սակայն բաց չթողնելով ոչ մի վայրկյան՝ դիմում է վերին ուժերի գործությանը, մեկ հարվածով ավագակին գլորում սանդուղքից ցած, որտեղ էլ գամփռ շները վրա են հասնում ու բզկտում նրան...

Բանախոսը վերջում կոչ արեց մատաղ սերնդին՝ շատ հեքիաթներ կարդալ և շնորհակալություն հայտնեց հրավերի համար։

Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը բարձր գնահատեց նրա գործունեությունը հեքիաթագիտության բնագավառում՝ մտերմիկ տոնով նրան անվանելով «քայլող հեքիաթ»։

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐՑԱՆ

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«ԱՐՑԱՆ» ԶԱԶ-ՆՎԱԳԱՆՄԱՐԻ ՀՐԱՇԱԼԻ ՀԱՍԵՐԳԸ

Երևանում այս տարվա ընթացքում արդեն երկրորդ անգամ ներկա եղա «Արցախ» ջազ-նվագախմբի համերգին ու մտովի հայտնվեցի Ստեփանակերտում: Արցախում բնակվելու տարիներին մայրաքաղաքում մի քանի անգամ ներկա եմ եղել Արցախի պետական ջազ նվագախմբի համերգներին: Հիշարժան էր նաև մոսկվայաբնակ հայտնի ջազմեն Սերգեյ Մանուկյանի և



Արցախի պետական ջազ նվագախմբի համաժողովը համերգը, որը կայացավ 2018թ. նոյեմբերի 11-ին Շուշիում: Սկզբում գործիքային կատարումով հանդես եկավ Արցախի պետական ջազ նվագախումբը՝ ղեկավար՝ հիմնադիր Տիգրան Լալայանի ղառնամուրի նվագակցությամբ ու գլխավորությամբ: Հայտնի ու նոր ջազային երգերի կատարումով ներկաներին ոգևորեցին ու հիշողությունների գիրկն ուղարկեցին երգչուհիներ Տաթևիկ Բալայանը, Գոհար Ալեքսանյանը, Լիլիթ Ավանեսյանը: Երգիչ Մարատ Բալայանը նոր է ընդունվել ջազի նվագախումբ և նույնպես երգերի զեղեցիկ մեկնությամբ գերեց ներկաներին: Այդ օրը համերգին ներկա էին շատ քաջաթաղցիներ, ու ոգևորված տուն գնացին: Այսօր մեծ ցավ եմ ապրում՝ հայաթափ է Արցախը, իսկ արցախյան մշակութային օջախները ցիրուցան են: Եվ շատ կարևոր է՝ կան անհատներ, կառույցներ, որոնց օժանդակությամբ մշակութային որոշ խմբեր վերականգնվելու են, շարունակում գործել:

Հոկտեմբերի 21-ին Երևանում՝ Հայաստանի ճարտարապետների միության դահլիճում, «Աշնանային հանդիպում» խորագրով համերգով հանդես եկավ «Արցախ» ջազ-նվագախումբը՝ Տիգրան Լալայանի ղեկավարությամբ: Գրեթե 25 տարվա պատմություն ունեցող նվագախումբը մշակութային հարուստ ճանապարհ է անցել: Սակայն, ինչպես արցախյան բոլոր մշակութային կառույցները, այնպես էլ 2000-ի սկզբներին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում դիրիժոր, դաշնակահար «Ջազի հայկական ասոցիացիա»-ի անդամ Տիգրան Լալայանի կողմից հիմնադրած Արցախի պետական ջազ նվագախումբը 2023թ. բռնի տեղահանված հայրենակիցների հետ հեռացավ հայրենի Արցախից ու կանգնեց մեծ դժվարությունների առաջ: Մոսկվայում գործող «Դիալոգ» կազմակերպությունը Յուրի Նավոյանի ղեկավարությամբ 2025-ի սկզբներին աջակցեց նվագախմբին, որը վերականգնվելով «Արցախ» ջազ նվագախումբ անունով: Երևանյան երկրորդ համերգի սկզբում հաղորդավարը, ներկայացնելով «Դիալոգ»-ին, ասաց. «Դիալոգ» կազմակերպու-



թյան աշխատանքը մշտապես ուղղված է հայկական պատմական և մշակութային ժառանգության պահպանմանը, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, Հայաստանի և Ռուսաստանի միջև գործընկերային հարաբերությունների զարգացմանը»: Եվ «Դիալոգ»-ի աջակցությամբ

2025-ի ամռան ընթացքում «Արցախ» ջազ-նվագախումբը համերգներով հանդես եկավ Մոսկվայում: Ալեքսեյ Կոզլովի ակումբում «Արցախ» ջազ նվագախմբի ելույթը եղել է Մոսկվայի ջազ փառատոնի ծրագրի կարևորագույն պահերից մեկը, և կատարումը գերել է մոսկովյան հանդիսատեսին: Մոսկվայից հետո հուլիսի 31-ին Տիգրան Լալայանի ղեկավարած նվագախումբը համերգով հանդես եկավ Երևանում՝ Կոմիտասի անվան կամերային տան բաց դահլիճում: Եվ ահա, Երևանյան երկրորդ համերգը, որին ներկա էին ջազի սիրահարներ, շատ էին արցախցիները, նաև՝ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդը, թեմական խորհրդի ներկայացուցիչներ, հյուրեր: «Ներկայիս իրավիճակում կարևոր է ուշադրության կենտրոնում պահել Արցախի ինչպես նյութական, այնպես և ոչ նյութական ժառանգությունը: Այդ համատեքստում կարևորվում է Արցախի մշակութային միավորների պահպանումն ու միջոցառումների կազմակերպումը, որոնց շարքում են նաև «Արցախ» ջազ-նվագախմբի համերգները», - համերգի սկզբում նշեցին հաղորդավարները: Իսկ հովանավորների կողմից խմբի վերականգնվելուն ոչ միայն մշակութային, այլև հոգևոր քայլ է: Ծրագրում, ինչպես առաջին համերգում, այնպես էլ այս անգամ հնչեցին և հայ երգահանների՝ Առնո Բաբաջանյանի, Կոնստանտին Օրբելյանի, Ալեքսանդր Աճեմյանի, Մարտին Վարդապարյանի, Ռոբերտ Ամիրխանյանի, այնպես էլ ջազի համաշխարհային դասականների (Ֆրենկ Սինատրա, Բադի Ռիչ, Ջերի Ջերման) և այլոց ստեղծագործություններ՝ բնօրինակ մշակումներով և կենդանի կատարմամբ: Առավել ոգևորիչ ու տխրեցնող էին «Արցախյան շարան»-ի կատարումները: Երևանյան առաջին համերգի համեմատությամբ այս անգամ հնչեցին նոր երգեր ևս: «Արցախ» ջազի մենեդջիները հիմնականում արցախցիներ են, տարբեր ժամանակներում իրենց ներդրումն ունեն նվագախմբի կայացման գործում, և այսօր էլ մեծ ոգևորությամբ են հանդես գալիս՝ իրենց ոգևորությունը փոխանցելով հանդիսատեսին: Այդ-

նա Բալայան, Մարատ Բալայան, Գոռ Հայրապետյան, Սեդա Աղաբաբյան մենեդջիների քառյակը միասին ու առանձին իրենց կատարումներով ստիպում էին հանդիսատեսին ծափողջյուներ ու ոգևորվել: Ալեքսանդր Աճեմյանի «Արի՛ սիրուն, դու ես իմ երազը» երգի կատարումով հանդես եկավ Մարիա Դավթյանը՝ բարի հուշեր արթնացնելով: Համերգի վերջում նվագախմբի հետ հանդես եկան նաև «Արցախի բալիկներ» խմբի երիտասարդ երգիչները: Հնչեցին Արցախում սիրված երգեր: Մեր հայրենիքի Արցախ հատվածի աշխատավոր մարդու ազնիվ հոգու, նրա դաստիարակած բարի զավակի,



կրած դառնությունների մասին է «Աղե արկանք» երգը, որը լսելով՝ մտքով դարձյալ Արցախում եմ ու այնաների երգն եմ ըմբռնում:

Պուժկես տակեն վերջին փուլին
Եկավ տարավ Դերանց Նուշին,
Էն մին հափուռ կորեկըն էլ
Բալաս տըվավ ծղտեն, դուշին:
Աղե արկանք, մաղե արկանք,
Քըզանում կա էլիա հարգանք...

Ու հավատացած եմ՝ դահլիճում ներկա բոլոր արցախցիները մտքով տուն հասան... Համերգը տևեց մոտ երկու ժամ, և հանդիսատեսը սպասում էր այլ երգ ու երաժշտություն ունկնդրել:

Համերգից հետո միջանցքում էին նաև նվագախմբի անդամները՝ երաժիշտներ, մենեդջիներ: Շատերն էին մոտենում նրանց ու շնորհակալություն հայտնում: Հուսանք՝ երրորդ համերգը չի ուշանա:

ԱՋՆԱԿՈՒՐԸ՝ ՀԱՅԵՐԵՆ

Հոկտեմբերի 29-ին Երևանում՝ «Թեքեյան մշակութային կենտրոն»-ի դահլիճում, տեղի ունեցավ բանասեր, թարգմանիչ, գրադարանագետ, երաժիշտ, Պերճ Թյուրաբյանի «Ազնավուր 100» 3-րդ ալբոմի շնորհանդես-համերգը: «Ազնավուրը՝ հայերեն» խորագիրն էր կրում բացառիկ համերգը: Ներկա էին Ազնավուրի երգերի սիրահարները, հյուրեր: Մինչ համերգի սկսելը, դաշնակահար Արթուր Աբրահամյանը հնչեցնում էր ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ, շանսոնիե, երգահան, բանաստեղծ, գրող, կինոդերասան և հասարակական գործիչ Ազնավուրի երգերի երաժշտությունը՝ ազնավուրյան տրամադրություն ապահովելով դահլիճում: Ներկաներին ողջունեց «Թեքեյան մշակութային կենտրոն»-ի տնօրեն Արմեն Ծուլիկյանը. «Պերճ Թյուրաբյանի՝ «Թեքեյան կենտրոն»-ի հարկի տակ համերգ ունենալն արդեն ավանդույթ է դառնում՝ հատկապես Շառլ Ազնավուրի 100-ամյակի առթիվ ձևաչափով: «Ազնավուրը՝ հայրենի» այս նախաձեռնությունը, որն ամբողջապես Թյուրաբյանին է, մենք դրա հերթական կայացման ենք ներկա այսօր: Ձեռնարկը կա-

րող ենք կոչել նաև «Պերճ Թյուրաբյան և ընկերներ», քանի որ եթե տարիներ առաջ այստեղ Պերճը համերգով հանդես եկավ երգչուհի Նաիրի Գասպարյանի հետ, ապա այսօր նրանց հետ են նաև դերասան և երգիչ Մխիթար Ավետիսյանը, երգիչ Դավիթ Աբրահամյանը, դաշնակահար Արթուր Աբրահամյանը»:

Ներածական խոսքով հանդես եկավ հայ ջութակահար, դիրիժոր, երաժշտագետ, Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Դանիել Երաժիշտը: Ասաց՝ ծանոթանալով երգացանկի բանաստեղծություններին, հիշել է Ազնավուրի խոսքը՝ «Նախ և առաջ ես բանաստեղծ եմ... Եվ Ազնավուրը կարողացել է տեքստը տարրալուծել երգի մեջ: Անդրադառնալով Ազնավուրի «Դեռ երեկ» երգ-բանաստեղծությանը՝ ասաց. «Այժմ, երբ Պերճն ու իր ընկերները կսկսեն համերգը, մենք բոլորս կդառնանք 20 տարեկան»:

Երգելուց առաջ Պ. Թյուրաբյանը շնորհակալություն հայտնեց «Թեքեյան կենտրոն»-ի անձնակազմին, տնօրենին համերգն

իրենց հարկի տակ կազմակերպելու համար: «Մենք արդեն մի քանի համերգ ենք ունեցել այստեղ», - ասաց նա՝ շնորհակալություն հայտնելով նաև Դանիել Երաժիշտին ու իր ընկերներին, մշտելով՝ հայրենի երգելու են Ազնավուրի կարևոր երգերը: Մխիթար Ավե-




տիսյանի կատարմամբ, Պ. Թյուրաբյանի՝ կիթառի նվագակցությամբ «Դեռ երեկ» երգով էլ սկսվեց համերգը: Նաիրի Գասպարյանն ու Պերճ Թյուրաբյանը միասին երգե-

ցին, այնուհետև «Մամա» երգը հրաշալի կատարումով ներկայացրեց Նաիրին՝ Պերճի՝ կիթառի նվագակցությամբ: Ու հնչեցին նաև «Բոհեմը», «Երիտասարդություն», «Պետք է գիտնալ», «Նա», «Երկու կիթառ», «Ինչպես ասում են», «Հավերժական սեր» ու այլ երգեր անհատական, միասին կատարումներով: Որոշ երգեր հնչեցին առաջին անգամ: Հուզիչ էր «Ավե Մարիա»-երգի կատարումը, որն այլ ազդեցություն թողեց դահլիճում: Մոտ 3 ժամ տևած համերգը, հիրավի, ներկաներին երիտասարդացրեց: Շատերը մտքով հետ գնացին, երբ Ազնավուրի երգերը հնչում էին դեռևս ռադիոյով, սև-սպիտակ էկրան ունեցող հեռուստացույցներով: Համերգին ներկա էր նաև լոնդոնահայ բարերար Բագրատ Նազարյանը, որը հովանավորել է Պ. Թյուրաբյանի ալբոմներից մեկի կայացումը: Իր խոսքում Բ. Նազարյանը շնորհավորեց հանդիսատեսին նման համերգի մասնակից լինելու համար, կարևորեց Թյուրաբյանի երգարվեստը:

Գոհ էր հանդիսատեսը, ներկա եղավ սպասված համերգի:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Բանասիրական գիտությունների թեկնածու, գրող ԼեՈՆԻԿ ՅԱԿՈԲՅԱՆԸ օրերս հրատարակել է իրանահայ հայտնի բանաստեղծ Դևի (Մարգար Ղարաբեկյան) գրական ժառանգությանը նվիրված մենագրություն:

Դևը ծնվել է 1901 թվականին Թեհրանի Ֆասանաբադ թաղամասում՝ ծարտարապետ, քանդակագործ, ազգային-հասարակական գործիչ Ավե-

տիս Խան Ղարաբեկյանի ընտանիքում, որը սերում էր Արցախի մելիքական տնից. «Ջաւակն է ազգային-հասարակական գործիչ՝ ճարտ. Աւետիս Խան Ղարաբեկեանի: Սերում է Ղարաբադի Մելիքութիւններից»: Իսկ «Լոյս Փարիզի» հանդեսի «գրականություն» բաժնում գրված է. «Իր նախնիքը եկած են Իրան Ղարաբադի Շուշի քաղաքէն եւ իր գերդաստանը կը պատկանի Ղարաբադի Մելիքներու շառաիղին»:

Արժեքավոր մենագրության հրատարակման առթիվ շնորհավորելով մեր հայրենակցին՝ տպագրում ենք մի հատված հիշյալ գրքից:

Երկու հարևան, արիացի ժողովուրդների՝ հայերի ու պարսիկների առնչությունները հազարամյակների պատմություն ունեն: Պատմաքաղաքական, տնտեսական, հասարակական շփումներին չեն զիջել մշակութային, հոգևոր ներթափանցումները, որոնց արմատները հասնում են վաղմջական բանախուսական, առասպելաբանական շերտերին: Հայ-իրանական մշակութային առնչությունները, կարելի է ասել, սկիզբ են առել դեռևս մեր ժողովրդի կազմավորման ժամանակներից, որը պայմանավորված է ոչ միայն աշխարհագրությամբ, այլև երկու ժողովուրդների սովորույթների, ավանդույթների, մտախառնվածքների մի շարք ընդհանրություններով և հարստացել են մինչև մեր օրերը: Այսօր էլ շարունակվում են նման մշակութային երկխոսությունները. «Պատմական իրադարձությունների, հարևան երկրներ հանդիսացող Իրանի և Հայաստանի քաղաքական ու հոգևոր կյանքի փոփոխությունների հետ միասին փոխվել է նաև նրանց մշակութային կապերի բնույթը: Ավելի քան երկուս ու կես հազարամյակի պատմություն ունեցող այս կապերը պատմական տարբեր պայմաններում տարբեր դրսևորումներ են ունեցել»:

Այդ շփումներն ավելի խորն ու ընդգծված դարձան, երբ Մեծ Հայքում գահակալեց պարթև Արշակունիների կրտսեր ծյուղը: Այս մասին Ն. Ադոնցը նշում է. «Այն ժամանակվանից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը և նրանց կրտսեր ծյուղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապը ավելի սերտ դարձավ»:

Երկու երկրների քաղաքական դաշնադրությունը մեծապես նպաստեց հոգևոր կապերի զարգացմանն ու խորացմանը: Այդ կապերի ավանդակառության, մատենագիտական փոխադարձ հիշատակությունների մասին բավական հարուստ տեղեկություններ է թողել Մովսես Խորենացին. «Եվ այս բանի վրա թող ոչ ոք չգարմամա, որ թեպետ շատ ազգեր մատենագիրներ են ունեցել, ինչպես ամենքին հայտնի է, մանավանդ պարսիկներն ու քաղղեացիները, որոնց մոտ ավելի շատ են գտնվում մեր ազգին վերաբերյալ բազմաթիվ գործերի հիշատակաբաններ...» կամ «Այս բանը մեզ հաստատապես պատմում է Հանրի Ողյունայ թուրմը, որ գրել է մեհենական պատմություններ և ուրիշ շատ գործեր, որ մենք պատմելու ենք, որին վկայում են նաև Պարսից մատյանները և հայոց վիպասանների երգերը»:

Առանձնապես ուշադրության է արժանի պարսիկ պատմիչ Խոռոհբուտի մասին Խորենացու հիշատակումը: Խոռոհբուտի մասին պարսիկներն իմանում են Խորենացու պատմությունից: Նա ոչ միայն Շապուհի ու Հուլիանոսի ժամանակների պատմությունն

է գրել, այլև հունարեն է թարգմանել մեկ այլ պարսիկ պատմիչի՝ իր հետ գերության մեջ գտնվող Բարսումայի «Ռաստոսիուն» երկը. «Սրա հետ միասին նա թարգմանեց հին թագավորների պատմությունը պարունակող մի մատյան, որ գրել էր իր գերեկից մի ոմն Բարսումա»:

Անկասկած, երկու երկրների մշակութային կյանքը հազարամյակների ընթացքում ներհյուսվել, սերտաճել է և որոշ դեպքերում դժվար է հստակ տարբերակել հայկականն ու պարսկականը: Սակայն մի բան հստակ է՝ երկու ազգերի մատենագիտական, բանախուսական ուսումնասիրությունները լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում իրար: Շատ տեղին է Մամուկ Աբեդյանի դիտարկումը, թե «պարսից կյանքի և գրականության ուսումնասիրությունը մեծապես կարող է նպաստել նույնիսկ մեր կյանքի ուսումնասիրությանը, քանի որ հայ ազգն յուր սկզբից մինչև ներկաս, թե ցեղակցությամբ և թե պատմական կյանքով, կապված է եղել պարսից հետ»:

Հայ-պարսկական մշակութային, հոգևոր կյանքը մեր ուղի մտավ ու որակական մոր հատկանիշներ ձեռք բերեց, երբ Պարսկաստանում սկսեցին ի հայտ գալ հայկական գաղութներ՝ հիմնականում պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանից բռնի տեղահանված հայերի շնորհիվ:

Հատկապես առանձնանում են Շահ Աբասի ավերիչ արշավանքների պատճառով Հայաստանից տեղահանված տասնյակ հազարավոր հայերի կողմից Սպահան քաղաքի մերձակայքում հիմնված Նոր Ջուղայի, ինչպես նաև՝ հետագայում՝ Թեհրանի, Դավրեժի գաղութները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը՝ 20-րդ դարի 20-ական թվականներից մինչ 70-80-ական թվականները, աչքի է ընկնում պարսկահայ գաղութներում մշակութային կյանքի, հատկապես՝ գրականության բուռն վերելքով. «Պարսկահայ գաղթօջախի գրականության մեջ 1920-30-ական թվականներից ծանոթ անուններ են Ոստանիկը, Արամ Գառնին, Դևը, Գևորգ Դարձին, Հրանտ Ֆալյանը, Արշին, հետպատերազմյան տարիներին՝ Գալուստ Խանենցը, Ջորայր Միրզայանը, Արշավիր Սկրտիչը, Աշոտ Ասլանը, դարձավերջի երկու տասնամյակից՝ Խաչիկ Խաչերը, Վարանդը, Կոյա Տեր - Հովհաննիսյանը, Ռուբինան, Արմանդը, Ալմին և ուրիշներ»,- գրում է Վազգեն Գաբրիելյանը: Իսկ Հակոբ Մճուրին, համառոտ անդրադառնալով պարսկահայ բանաստեղծներ Դևին, Գ. Խանենցին, Ջ. Միրզայանին, Արշավիր Սկրտիչին, Ռ. Բենին և այլոց, գրում է. ««Նոր էջը» կարդալ է ետքը միայն հասկցայ թէ ենթադրութիւններս ճիշդ չէին: Թէ այս գրողները յանկարծ չեն բուսած, գրական

անցեալ մը, կեանք մը, կլիմայ մը գոյութիւն ունի հոն, որ ամէն տարի իր բերքը կուտայ: Ես այս գրողներուն հաւնեցայ»:

Այդ գրականությունը դարձավ հայկական և պարսկական մշակույթի անբաժանելի մասը՝ միշտ կենդանի պահելով ազգային ոգին, արևելքին յուրահատուկ դիմագծերն ու համամարդկային արժեքներին նվիրվածության ուխտը:

Սոտ լինելով պատմական հայրենիքին՝ իրանահայ գրականությունը իրեն չհամարեց անջատ, կտրված արևելահայ գրականությունից: Ինքն իրեն համարելով մայր հայրենիքի գրականության մի ամուր ճյուղ՝ հավատարիմ մնաց նրա ավանդույթներին ու հետապնդած արժեքներին. «Գրական ասպարեզում, մանաւանդ, իրանահայությունն անջատողական դիրք չի բռնել երբեք. նա լայնամտօրէն իր մտքի արգասիքները միախառնել է արևելահայ գրական մեծ հունձքին»:

Իրանահայ գրողները, հատկապես՝ բանաստեղծները, կրելով Վահան Տերյանի, Եղիշե Չարենցի, Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ոգու կորովը, շարունակեցին նրանց կիսատ թողած ճանապարհը՝ մոր գույներով հարստացնելով հայ բանաստեղծությունը. «Իրանահայ բանաստեղծությունը որոշ տարբերություններ ունի միւս հայ գաղութներու ինչպէս նաև հայրենիքի գրական շարժումէն: Դիտել տանք անցողակի որ իրանահայ բանաստեղծները կը գտնուին արևելահայ բանաստեղծներուն՝ յատկապէս Իսահակեանի, Տերեանի և Չարենցի զօրաւոր ազդեցութեան տակ, որ ոմանց մօտ շատ շեշտուած է»:

Սրան զուգահեռ՝ իրանահայ բանաստեղծությունը հավերժորեն կապված մնաց Արևելքին. «Պարսկահայ բանաստեղծների զարգացումը խորն է ու նուրբ, ոճը պատկերաւոր և փոխաբերական, քանի որ նրանք ապրում են բանաստեղծության դասական հայրենիք Իրանում, ուր ամեն մարդ բանաստեղծ է իւրովի, եղել է և կա, սիրային երգ երգողից մինչև փողոցային հայիոյողը»:

Սակայն, ցավոք սրտի, պարսկահայ գրականությունը մինչ այսօր մնում է քիչ ծանոթ թե՛ մայր հայրենիքի, թե՛ սփյուռքի ընթերցողին. «Իրանահայ գրականութիւնը իր ամբողջութեան մէջ գրեթէ անծանօթ է արեւմտահայ գաղութներէն»:

ԴԵՎ

ԻՄ ԵՐԳԵՐԸ

Երգը իմ սերն է, հոյգերս անգին,
Երգով եմ խնդում ու երգով լացում.
Երգը իմ կեանքն է, իմ անեզր հոգին,
Երգով եմ սիրտս ամենքին բացում:

Ու երգը, երգը, օրերում իմ այս
Այնքա՛ն է գերում, այնքա՛ն եմ սիրել,
Որ երգի համար կարող եմ հիմա
Իմ հազարլեզու հոգին նւիրել:

ԱՆՉԱՓ ԵՐԳ

Սիրում եմ երբեմն տեսնել անչար ու անմեղ
Քո հայեացքներում,
Մէր, տենչ, կարօտանք, դեռ չգործած մեղք
Ու մեղքի ներում:

Երբ ինձ թոււմ է, որ սիրտդ միշտ ձգտող
Ու սիրո ծառաւ,
Տանջում է բախտը միշտ ծաղրող
Ու անիրաւ:

ԾՆՆՂՅԱՆ ԳԻՇԵՐ

Հիշում եմ Ծննդյան գիշերը հիմա,
Սենեակդ սիրալիկ լոյսերի ներքո,
Հիշում եմ գիթառի ծայրը տխրամած
Ու երգերը քո:

Իսկ հիմա Ծննդեան այս գիշեր մորից
Տաղտուկ է սենեակս, մենակ եմ ու հեզ.
Հիշում եմ սենեակդ, յոյզը երգերիդ,
Ու կանչում եմ քեզ:

ԴԵ ԳՆԱ ՀԻՄԱ

Դե գնա հիմա...
Քեզնով ամենքը, ամենքն եմ հարբում
Ու սիրում, սիրում փայլը աչքերիդ.
Դու գնա, սփռիր զգաւոր ու համբոյր
Ու մի ժպտա ինձ մորից ու մորից.
Ես պիտի ակնն հոգիս քեզ համար,
Դու գնա հիմա:

Է՛, գնա հիմա...
... Իսկ իմ հոգու մեջ, ի՞նչ փոք քեզ
համար,
Գիշեր կը լինի, թե՛ տանջանք ու մահ,
Դե գնա հիմա:

ԿՀԻՇԵՄ ՄԻՇՏ

Չեմ մոռանա ու կյիշեմ ես անվերջ
Նոր կանաչը քո շալի,
Քո աչքերից խաղաղ թափող հոգուս մեջ
Տխրությունը հաճելի:

Կյիշեմ միշտ քինջ գիշերը հին գուռի
Ու ծիծաղը մեր զնգում,
Ու լուսնի տակ գուռը տանող մեղ ուղին
Ու ցուլերը աստղագույն:

ԿԱՊՈՒՅՏ ԱՐՋԻԿ

Տխրաղօղանջ ժամի զանգն էր հնչում դեռ,
Տօն էր ու պատարագ էր.
Երբ էր գուռում, հիշո՞ւմ ես, ես չգիտեմ,
Դու կապւտ էիր հագել:

Խորհրդաւոր վառ կանթեղներ ու մոմեր՝
Քո աչքերի կապոյտում
Կապոյտ աղջիկ, աղօթքների լուռ ժամ էր,
Ես քեզ էի աղոթում:

Աղոթք դարձած ու սրբացած դեմքիդ հեզ
Բուրվառ էին խնկարկում.
Հնչում էին, Կապոյտ աղջիկ, երգի պէս
Քո զանգերը իմ հոգում:

ԴՈՒ ՆՈՐԻՑ ԵԿԵԼ ԵՍ

Դու մորից եկել ես, ի՞նչ անեմ,
Ես այնպես սիրել եմ քո հոգին,
Գերել ես հայացքովդ քո անեզր
ՈՒ կապել քո սիրո հմայքին:

Քեզ երկար, շատ երկար եմ սիրել,
Ու թաքում արտասվել քեզ համար,
Դու մորից եկել ես, - քեզ սիրե՞մ,
Քեզ սիրե՞մ, քեզ սիրե՞մ, ի՞նչ անեմ,
Աչքերս դեռ թաց են մինչ հիմա:

Չգիտես ի՞նչ անես, ո՞ւմ սիրես,
Դու խենթ ես, խենթ աղջիկ մի լուսե,
Ես էլ քեզ խենթի պես եմ սիրել,
Բայց քեզնից երբեք սեր չեմ տեսել:

Դու խենթ ես, խենթ աղջիկ, բայց հիմա
Դու մորից եկել ես, ի՞նչ անեմ,
Ես էլ խենթ եմ դառել ակամա,
Քեզ մորից սիրել եմ, ի՞նչ անեմ,
Աչքերս դեռ թաց են մինչ հիմա:

Քեզ սիրե՞մ, քեզ սիրե՞մ, ի՞նչ անեմ,
Աչքերս դեռ թաց են մինչ հիմա:

